Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան

16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 5-ի նյութական իրավունքի բաժնի 2"46-րդ, 10"31-րդ, 16"35-րդ, 20"11-րդ, 23"27-րդ, 25"43-րդ, 29"13-րդ, 34"10-րդ, 35"75-րդ, 30"55-րդ, 14"9-րդ, 18"42-րդ,

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

31-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից, քանզի քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որևէ հանգամանք առկա չէ: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք սպանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև ոչ նյութական առավելությունը, այդ թվում՝ սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 մավոր:*

11-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ավազակության հանցակազմի յուրահատկությամբ պայմանավորված սույն խնդրի պայմանների պարագայում կիրառելի չէ փաստական սխալի կամ հանցափորձի կանոնը, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

27-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները խնդրի ձևակերպման մեջ տեղ գտած անճշտության պարագայում, ընդունելի են հանձնաժողովի համար, ուստի տրվում է 1 միավոր:*

43-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, ինչը չի բխում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից: Բացի այդ, հավակնորդի պնդումները չեն բխում խնդրի փաստական հանգամանքներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

13-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի իրավական վերլուծությունից, ներկայացված տարբերակում առկա է հանցագործությունների համակցություն, քանի որ խնդրի պայմաններից երևում է, որ Թ-ի կողմից առկա է նաև հրազենը պահելու դիտավորություն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

75-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի պնդումը ապաքրեականացում տերմինի վիճարկման վերաբերյալ ընդունելի չեն, ակնհայտ է , որ արարքի ապաքրեականացման հնարավորությունը կապված չէ բացառապես քրեական օրենքգրքի հետ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

55-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Հետևաբար, հաշվի առնելով, որ մեջբերված իրավադրույթների և եզրահանգումների համատեքստում ընտրված տարբերակը ճիշտ է, ուստի տրվում է 1 միավոր:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն: Իսկ ինչ վերաբերում է այն փաստարկին, որ բոլոր տարբերակները սխալ են, ապա հավականորդը իր գնահատմամբ սխալ*

պատասխանների պարագույն չի ընտել ճիշտ պատասխանին առավել մոտը, ուստի գնահատականը չի բարձրացվում: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ծանր վնաս պատճառելը ավազարկության առանձնապես ծանրացնող հանգամանք է, իսկ քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններից ելնելով ծանրացնող /զենքի գործադրմամբ/ և առանձնապես ծանրացնող հանգամանքների մրցակցության պայմաններում արարքը չէր կարող որակվել ծանրացվող հանգամանքով: Բացի այդ, հավակնորդը հետևողականություն չի դրսևորում, ինչը ևս վկայում է բողոքի ոչ պատճառաբանված լինելու մասին, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***4785*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 21 միավորը բարձրացնել 5 միավորով՝ արդյունքում արձանագրել 26 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ